

ԳՐԻԳՈՐ ՄԱՐՏԻՆԻ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գերակշռող մասնավոր հատված ունեցող տնտեսության ստեղծման համար գոյություն ունի երկու ուղի. պետական գույքի ապապետականացում և նոր մասնավոր ընկերությունների ստեղծում: Երկու ուղիներն էլ հավասարապես կարևոր են: Նոր ստեղծվող մասնավոր առևտրային կազմակերպությունները կարող են կարճ ժամանակահատվածում շահույթ ստանալ և լուրջ ներդրում կատարել երկրի տնտեսական աճի գործում: Սակայն գերակշռող պետական հատված ունեցող երկրներում, որոնց թվին էր դասվում Հայաստանը նախկին ԽՍՀՄ կազմում, մասնավոր հատվածի զարգացումը առանց պետական գույքի ապապետականացման (մասնավորեցման ծրագրերի իրականացման) անհնար էր պատկերացնել:

Անցած դարի 90-ականներից պետական գույքի մասնավորեցումը դարձավ նախկին խորհրդային երկրներում բարեփոխումների հիմնական ուղղությունը: Այդ երկրներում մասնավորեցման փորձը տվել է իր առաջին արդյունքները, որոնց հիմնական մասը գնահատվում է խիստ դրական: Մասնավորեցման մի շարք գործարքների նկատմամբ, սակայն, հնչում են քննադատություններ, որոնց հիմնական իմաստը հանգում է նախկին պետական սեփականության (հարստության) կենտրոնացմանը փոքրաթիվ անձանց ձեռքերում:

Քննարկելով պետական գույքի մասնավորեցման գործընթացին առնչվող հիմնահարցերը հանրապետությունում՝ անհրաժեշտ է նշել, որ տնտեսական հարաբերությունների բնույթը վերափոխելու համար Հայաստանի Հանրապետությունը նպատակ է դրել, արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հարաբերությունները փոխակերպելով, հասնել սեփականության բազմաձևության և այդ հիմքի վրա անցում կատարել սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսության: Նման մոտեցումը թելադրված է ինչպես ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս գալու, այնպես էլ արդյունավետ սոցիալական և տնտեսական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ, հանրապետության տնտեսությունը համաշխարհային տնտեսության բաղկացուցիչ մասը դարձնելու և «բաց» տնտեսություն ստեղծելու պահանջներով:

Հայաստանի Հանրապետությունը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն էր, որ անկախության հռչակագրից հետո ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում մասնավորեցման հիմունքները» որոշումը (ՀՀ Գերագույն խորհրդի 1991թ. փետրվարի 26-ին): Այդ որոշման մեջ նշվեց, որ ՀՀ-ում շուկայական հարաբերություններին անցումը պետք է իրականացվի պետական սեփականության մասնավորեցման միջոցով:

Հողի և գյուղատնտեսական տեխնիկայի սեփականաշնորհմամբ սկսվեց հանրապետության տնտեսական բարեփոխումների գործընթացը, որը համարվում է ՀՀ-ում մասնավորեցման առաջին ուղղությունը: Հայաստանը դարձավ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինը, որտեղ իրականացվեց այդ գործընթացը: 1993-1994 թվականների ընթացքում մասնավորեցվեց գյուղատնտեսական նշանակության հողերի մոտ 90%-ը: Մասնավորեցման արդյունքում մոտ 2 անգամ ավելացավ գյուղատնտեսությունում զբաղվածների քանակը, ինչը, հատկապես արդյունաբերական ձեռնարկությունների չաշխատելու պատճառով, դարձավ բարիքների արտադրության և բնակչության եկամուտների ապահովման հիմնական ոլորտը:

Մասնավորեցման երկրորդ ոլորտը առևտրի, սպասարկման և վճարովի ծառայությունների օբյեկտների մասնավորեցումն էր: Այդ բնագավառում բարենպաստ հող էր ստեղծվել մասնավորեցման համար, ինչը կապված էր ձեռնարկությունների փոքր չափերի, թեև իրավաբանորեն

չձևակերպված, սակայն փաստացի սեփականատերերի (տվյալ օբյեկտներում աշխատողների) առկայությամբ:

Դեռևս 1991թ. մարտին ընդունվեց առևտրի, հասարակական սննդի, վճարովի ծառայությունների և անավարտ շինարարության փոքր օբյեկտների մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշումը և 1991-1992թթ. մասնավորեցվեց վերոգրյալ ոլորտների 335 օբյեկտ, սակայն այն վճռական դեր չխաղաց ոչ պետական ոլորտի անհրաժեշտ կրիտիկական զանգվածի ստեղծման, գների նվազեցման և շուկայի աշխուժացման գործում:

1995-1997թթ. առավել արագ է ընթացել «փոքր» օբյեկտների (հիմնականում առևտրի և սպասարկման ոլորտի) մասնավորեցումը: Բավական է նշել, որ 01.11.1997թ. դրությամբ մասնավորեցվել է 5708 «փոքր» օբյեկտ:

Մասնավորեցման գործընթացի երրորդ ոլորտը պետական և հանրային բնակարանային ֆոնդի մասնավորեցումն էր (1997թ. հուլիսի 1-ի դրությամբ ավարտվեց այդ գործընթացը, որի արդյունքում մասնավորեցվեց այդ ֆոնդի 80 տոկոսը): Մա ոչ միայն կարևոր և խոշոր սոցիալական նշանակություն ունեցող միջոցառում էր, այլև մեծապես նպաստեց անշարժ գույքի շուկայի ձևավորմանը:

Մասնավորեցման հաջորդ կարևոր ոլորտը տնտեսության տարբեր ճյուղերի ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումն է: Մա թերևս մասնավորեցման ամենաբարդ և պատասխանատու փուլն է, որը իրականացման ձևերով և մեթոդներով զգալիորեն տարբերվում է ԱՊՀ-ի և Արևելյան Եվրոպայի երկրների համապատասխան գործընթացներից:

Տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում իրականացված պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերի արդյունքում (աղյուսակ 1) ձևավորվեց գերազանցապես սեփականության մասնավոր իրավունքի վրա հիմնված տնտեսություն, որտեղ ՀՆԱ-ի ավելի քան 80%-ը ստեղծվում է մասնավոր հատվածում: Պետական գույքի մասնավորեցումից ստացված մուտքերը 01.04.2017թ.-ի դրությամբ կազմել են ընդամենը 165,5 մլրդ ՀՀ դրամ և 108,5 մլն ԱՄՆ դոլար: Ըստ որում, 01.04.2017թ.-ի դրությամբ մասնավորեցվել (սեփականաշնորհվել) է 7309 «փոքր» օբյեկտ, 2043 միջին և խոշոր ձեռնարկություն և 101 անավարտ շինարարության օբյեկտ¹:

Ինչպես հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, այնպես էլ պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) հետևանքով տնտեսության բոլոր ոլորտներում գրեթե համատարած պետական սեփականության փոխարեն ձևավորվեց մասնավոր և մասնավոր-պետական (խառը) սեփականության վրա հիմնված առևտրային կազմակերպությունների ցանց և տնտեսություն²:

Հայաստանի Հանրապետությունում պետական գույքի մասնավորեցման միջոցով իրականացվող կառուցվածքային վերափոխումները կարող ենք բաժանել երեք փուլի:

Առաջին փուլը (կարճաժամկետ փուլ՝ 1991-1997թթ.) իրենից ներկայացնում է խիստ քաղաքականացված արտատնտեսական միջոցառում՝ տեխնիկական մասնավորեցում, որի հաջողությունը ամբողջովին կախված է սոցիալական խմբերի փոխզիջումների պայմաններից:

Երկրորդ փուլը (միջնաժամկետ փուլ՝ 1998-2001թթ.) հիմնականում բնութագրվում է սեփականաշնորհման սերտիֆիկատները շրջանառությունից հանելով և դրամական մասնավորեցմամբ: Տվյալ փուլի ավարտման չափանիշ է նոր սեփականատիրական իրավունքների համակարգի որոշակի կայունացումը, գույքային հարաբերությունների, ինչպես նաև տնտեսական մեխանիզմների և ինստիտուցիոնալ կառուցվածքների նոր համակարգի որակական և քանակական կայունացումը՝ որպես սեփականատիրական նոր իրավահարաբերությունների հետագա տնտեսական իրականացման համար նախապայման:

¹ ՀՀ կառավարության առնթեր պետական գույքի կառավարման վարչության տվյալներով:

² Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա.Խ.Մարկոսյան, Ա.Գ.Սահակյան «Պետական գույքի կառավարում», ուսումնական ձեռնարկ, երկու մասով, Եր., «Տիգրան Մեծ», 2015թ.:

Հայաստանի Հանրապետությունում միջին և խոշոր ձեռնարկությունների մասնավորեցման արդյունքները 01.04.2017թ. դրությամբ

N	Ձեռնարկությունների (ընկերությունների) մասնավորեցման ձևը	Մասնավորեցվել է		Այդ թվում՝ ըստ պետական կառավարման մարմինների												Այլ պետական մարմինները		Ընդամենը			
		Ընդամենը	Այդ թվում՝ 2016 թ.-ին	Էկոնոմիկա		Գյուղատնտեսություն		Քաղաքաշինության		Մշակույթի		Էներգետիկայի և բնական պաշարների		Տրանսպորտի և կապի		Պետական գույքի կառավարման վարչություն			Առողջապահության		Մյուս պետական մարմինները
				2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը		2016թ.-ին	Ընդամենը	
1	Ուղղակի վաճառք	652	3	168	-	74	-	44	-	30	-	9	-	31	-	225	3	20	-	51	-
	Այդ թվում՝ վարձակալին	209	-	84	-	29	-	29	-	12	-	6	-	9	-	11	-	7	-	22	-
2	Մրցույթ	177	-	24	-	27	-	20	-	7	-	10	-	10	-	68	-	1	-	10	-
3	Աճուրդ	66	-	9	-	13	-	-	-	1	-	-	-	1	-	40	-	-	-	2	-
4	Լուսային աճուրդ	62	-	26	-	27	-	6	-	2	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
5	Պետական բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն	1085	-	394	-	337	-	186	-	59	-	15	-	46	-	27	-	1	-	20	-
6	Պետական բաժնետոմսերի վաճառք մասնագիտացված շուկաներում	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	2043	3	621	0	478	0	256	0	99	0	34	0	90	0	360	3	22	0	83	0

Աղբյուրը՝ ՀՀ կառավարության արհմիջոցով պետական գույքի կառավարման վարչություն:

Երրորդ փուլը (երկարաժամկետ փուլ՝ 2001թ.-ից հետո) պետք է բնութագրվի սեփականատիրական իրավահարաբերությունների կայուն համակարգի առաջացմամբ¹:

Մասնավորեցման նպատակը ապագա շուկայական համակարգի նորմալ գործունեության համար անհրաժեշտ կայուն սեփականատիրական պայմանների ապահովումն է: Վերջին տարիներին պետական գույքի մասնավորեցմանը զուգահեռ զգալիորեն ավելացել են պետական գույքի օտարման գործարքները: Այս գործընթացն իրականացվում է այն պետական գույքի նկատմամբ, որը ընդգրկված չէ մասնավորեցման ծրագրերում, սակայն այդ գույքը պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույք չի համարվում, իսկ առևտրային շրջանառության մեջ պահանջարկ ունի և կարող է օգտագործվել շատ ավելի արդյունավետ կերպով, քան պետական սեփականության ներքո: Օտարման ճանապարհով ձեռք բերված գույքի սեփականատերերը, բացի գույքի արժեքը վճարելուց, հաճախ ստանձնում են նաև ներդրումային պարտավորություններ՝ հետագա տարիների ընթացքում տվյալ գույքը վերանորոգելու, արդիականացնելու և ըստ իրենց հայեցողությամբ օգտագործելու համար:

Պետական գույքի և գույքային իրավունքների մասնավորեցման, օտարման, պետական գույքի օգտագործման տարբեր ձևերով մասնավոր հատվածին տրվող ակտիվները մեծացնում են մասնավոր հատվածի տնտեսական ներուժը:

2015-2016 թվականներին ընդունված ՀՀ կառավարության որոշումների համաձայն պետական գույքի օտարման նպատակով կազմակերպվել է 10 անվանում անշարժ գույքի մրցույթ, կազմակերպված 10 մրցույթներից 5-ը կայացել են, 5-ը չեն կայացել, 5 անվանում գույքի օտարման նպատակով կազմակերպվել են նոր մրցույթներ: ՀՀ կառավարության կողմից ընդունված 8 որոշման համաձայն գնորդների կողմից ստանձնած պարտավորությունների գումարը կազմում է 2 293 400 եվրո և 13 473.0 հազ. դրամ:

Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, վարձակալությունից և օգտագործման տրամադրումից ստացված ընդհանուր դրամական մուտքերը 2012-2016 թվականներին ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, վարձակալությունից և օգտագործման տրամադրումից ստացված դրամական մուտքերը 2012-2016 թվականներին, մլն ՀՀ դրամ

	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	Ընդամենը 2012թ.-2016թթ.
1. Մասնավորեցում	353.3	455.9	178.4	51.9	61.4	1100.9
2. Օտարում	807.4	1493	1665.6	2436.3	6868.6	13270.9
3. Վարձակալություն	241.3	303.4	277.5	265.7	227.8	1315.7
4. Կապի սարքավորումների տեղակայում	-	-	4.4	61.8	89.5	155.7
5. Հողերի կադաստրային արժեքի վճարում	-	-	57.5	59.4	38.6	155.5
Ընդամենը՝ 5 ուղղություններով	3414.0	4265.3	4197.4	4890.1	9301.9	15998.7

Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 2012-2016 թվականների գործունեության տարեկան հաշվետվությունների տվյալներով:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ պետական գույքի մասնավորեցումից և օտարումից ստացված միջոցները բաշխվում են ՀՀ պետական բյուջեի և այն համայնքային բյուջեների միջև, որտեղ տեղաբաշխված է մասնավորեցված կամ օտարված անշարժ գույքը՝ օրենքով սահմանված համամասնություններով², իսկ բջջային կապի օպերատորների կողմից պետական շենքերի,

¹ Ս.Դավոյան, Պետական սեփականության կառավարում, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2003թ., էջ 88:

² Տե՛ս «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ը (համապատասխան փոփոխություններով և լրացումներով), «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

շինությունների տանիքներին կապի սարքավորումներ տեղադրելուց ստացված միջոցները բաշխվում են ՀՀ պետական բյուջեի, համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպությունների կամ կառավարչական հիմնարկների (որոնց տանիքներին տեղադրվում է կապի սարքավորումը) և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի միջև¹:

2016 թվականի ընթացքում պետական գույքի կառավարման, այդ թվում՝ պետական գույքի մասնավորեցման և օտարման, նվիրատվության և նվիրաբերման, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության կարգավորման, շահութաբերության բարձրացման բնագավառներում իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով Վարչությունում աշխատանքներն իրականացվել և իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- պետություն-մասնավոր հատված գործընկերության ամրապնդումը,
- մասնավորեցման, օտարման և նվիրաբերության ենթակա պետական գույքի կազմի, նվիրաբերության սուբյեկտների, ինչպես նաև քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների հետ կնքվող գործարքների պայմանների հստակեցումը,
- 50-ից ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության բարելավումը, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման, կոնցեսիոն պայմանագրով կառավարման հանձնելու, կազմակերպությունների վերակազմակերպման կամ լուծարման մասին համապատասխան առաջարկությունների ներկայացումը,
- անշարժ գույքի օպտիմալացման մեխանիզմների ներդրումը:

Սոցիալական ոլորտում ներդրումներ ներգրավելու, սոցիալական խնդիրներ լուծելու, բարեգործական ծրագրեր իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ կանոնակարգվել է պետական գույքի նվիրաբերության գործընթացը: Մասնավորապես՝ սահմանվել է պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը, որի շնորհիվ հանրօգուտ ծրագրերի իրականացման ճանապարհով կխթանվի սոցիալական ոլորտում ներդրումների իրականացումը:

Սահմանվել են նաև՝ նվիրաբերության ենթակա պետական գույքին ներկայացվող պահանջները, նվիրաբերության սուբյեկտները և պետական գույքը նվիրաբերության սուբյեկտներին նվիրաբերելու պայմանները: Որոշմամբ նախատեսվում է, որ պետական գույքը նվիրաբերության սուբյեկտներին կարող է նվիրաբերվել, եթե վերջիններիս առաջարկվող հանրօգուտ ծրագրերը վերաբերում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելուն, դաստիարակչական հիմնարկների, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատությունների, բարեգործական, գիտական և ուսումնական հաստատությունների գործունեության ոլորտներին և բավարարում են այդպիսի ծրագրերին ներկայացվող պահանջներին:

Որպես սոցիալական ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններին պետական աջակցության և գործունեության բարելավման նպաստավոր պայմաններ ստեղծելու գործիք, 2013 թվականի հուլիսի 10-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույք նվիրաբերելու կարգը հաստատելու մասին» N 805-Ն որոշումը: Որոշման ընդունման նպատակն է՝ աջակցել հանրակրթության ոլորտում նպատակային գործունեություն ծավալող կազմակերպություններին իրենց շենքային և ուսումնամեթոդական բազան բարելավելու, ուստի և մատուցվող կրթական ծառայությունների որակը բարձրացնելու գործում²:

¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վերաբերյալ համաձայնություն տալու և պայմանագրերի կնքման կարգը հաստատելու մասին» N 1130-Ն որոշման 18-րդ կետը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

² Տե՛ս ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 10-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող անշարժ

Կարչության կողմից շարունակվել է պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վերաբերյալ համաձայնություն տալու և պայմանագրերի կնքման գործընթացը, որը սահմանում է պետական սեփականություն հանդիսացող գույքի (շենքերի և շինությունների) օգտագործման առանձնահատկությունները տնտեսավարող սուբյեկտների կողմից: Այս գործընթացի շահառուներ են հանդիսանում այն պետական կազմակերպությունները (ՊՈԱԿ-ները, պետական կառավարչական հիմնարկները), որոնք զբաղեցնում են տվյալ շենքերը:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1130-Ն որոշման նպատակներն են՝

- կանոնակարգել տնտեսավարող սուբյեկտների՝ բջջային կապի օպերատորների կողմից կապի սարքավորումների տեղակայումը պետական սեփականություն հանդիսացող շենքերի տանիքներին՝ սահմանելով պարզ և թափանցիկ ընթացակարգ «մեկ պատուհանի» սկզբունքով, որպես մեկ պատուհանի պատասխանատու ճանաչելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը,
- տեսանելի դարձնել կապի սարքավորումների տեղակայման մասով պետական շենքերի և շինությունների օգտագործումից ստացվող եկամուտները և սահմանել այդ եկամուտների բաշխման համամասնությունները,
- թույլ տալ պետական ոչ առևտրային կազմակերպություններին ստանալ հավելյալ եկամուտներ պետական սեփականություն հանդիսացող շենքերի օգտագործման արդյունքում:

Կատարված աշխատանքների շնորհիվ 2016 թվականին 2015 թվականի համեմատությամբ էականորեն ավելացել են պետական գույքի օտարումից, մասնավորեցումից, վարձակալությունից և օգտագործման տրամադրումից ինչպես ՀՀ պետական բյուջե, այնպես էլ համայնքային բյուջեներ ուղղվող միջոցները և այլ կազմակերպությունների դրամական մուտքերը (աղյուսակ 3):

Հայաստանի Հանրապետությունում պետության և մասնավոր հատվածի համագործակցության օրինակների շարքում հարկ ենք համարում նշել մի շարք գործարքների մասին, մասնավորապես՝ Հայկական երկաթուղին կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու, «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու, ինչպես նաև ՀՀ-ում ջրային համակարգերը վարձակալության հանձնելու մասին որոշումները:

Հայկական երկաթուղու համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու մրցույթում «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերությունը հաղթող է ճանաչվել և Հայկական երկաթուղու համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցվել է «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը¹:

Նշված որոշումաբ հավանություն է տրվել Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրին, որով Հայաստանի Հանրապետությունը ճանաչվել է կոնցեսիոն, «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերությունը՝ երաշխավոր:

գույք նվիրաբերելու կարգը հաստատելու մասին» N 805-Ն որոշումը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրի նախագծին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին լիազորություն վերապահելու մասին» N 83-Ս որոշումը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, վարձակալությունից և օգտագործման տրամադրումից ստացված դրամական մուտքերը 2015-2016 թվականներին

Գործունեության բնագավառը	2016թ.	2015թ.	Աճը, %-ով
1	2	3	4
1. Պետական գույքի օտարումից մուտքեր, հազ.դրամ, այդ թվում՝	6 868 616,1	2 436 348,1	281,9
- պետական բյուջե	4 142 474,6	2 397 005,3	172,8
- համայնքային բյուջե	2 710 115,1	28 342,3	9 562,1
- Վարչության արտաբյուջե	16 026,4	11 000,5	145,7
2. Պետական գույքի մասնավորեցումից մուտքեր, հազ.դրամ, այդ թվում՝	62 954,3	51 977,7	121,1
- պետական բյուջե	61 433,0	51 178,2	120,0
- համայնքային բյուջե	1 521,3	799,5	150,3
3. Տարածքների վարձակալությունից մուտքեր, հազ.դրամ.	227 790,4 ¹	265 773,6 ²	
4. Կապի սարքավորումների տեղակայումից և սպասարկումից մուտքեր, հազ.դրամ, այդ թվում՝			
- պետական բյուջե	89 494,1	61 871,4	144,6
- ՂՈԱԿ-ների բյուջեներ	18 575,2	13 689,6	135,7
- այլ կառավարչական հիմնարկներ	67 545,1	47 440,5	142,4
	3 373,8	741,2	455,2

¹ Պետական գույքի վարձակալությունից 2016թ.-ի ընթացքում ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքագրվել է 227 790,4 հազ. ՀՀ դրամ՝ նախատեսված 192 400,0 հազ. ՀՀ դրամի փոխարեն (նախատեսվածից 18,4%-ով ավելի):

² Պետական գույքի վարձակալությունից 2015թ.-ի ընթացքում ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքագրվել է 265 773,6 հազ. ՀՀ դրամ՝ նախատեսված 205 000,0 հազ. ՀՀ դրամի փոխարեն (նախատեսվածից 29,6%-ով ավելի):

Աղբյուրը՝ ՀՀ կառավարությանն առնչվող պետական գույքի կառավարման վարչություն:

Փոստային ծառայությունների պարագայում, հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, որոնցից են՝

- Հայաստանի Հանրապետության փոստային տարածքի առավել զարգացման և առաջընթացի համար անհրաժեշտ է «Հայփոստ» ՓԲԸ-ի, ինչպես փոստային կապի ազգային օպերատորի կառավարման երկարաժամկետ և կենսունակ ձևի ընտրություն,
- հավատարմագրային կառավարիչը նախորդ 10 տարիների ընթացքում իրականացրել է «Հայփոստ» ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարումը, և այդ ընթացքում կողմերի միջև ձևավորվել է համագործակցության ավանդույթ,
- հավատարմագրային կառավարիչը պատրաստակամ է մինչև «Հայփոստ» ՓԲԸ-ի կառավարման մոդելի ընտրությունը կնքելու «Հայփոստ» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիր:

ՀՀ կառավարությունը 2016 թվականի նոյեմբերի 24-ին ընդունել է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» N 1240-Ս որոշումը, որով «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնվել են «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության հավատարմագրային կառավարմանը: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության (կառավարման հիմնադիր) և «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության (հավատարմագրային կառավարիչ) միջև կնքվել է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման մասին պայմանագիրը:

Տվյալ պայմանագրով նախատեսված է, որ հավատարմագրային կառավարիչն իրավունք ունի՝

- կառավարման հիմնադրից ընդունելու և պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան իրականացնելու ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարումը: Ցանկացած դեպքում, պայմանագիրը հավատարմագրային կառավարչին չի տրամադրում բաժնետոմսերի օտարման, գրավադրման, պահման հանձնելու, վարձակալության հանձնելու կամ այլ ձևով երրորդ անձանց փոխանցելու լիազորություն,
- գույքի հավատարմագրային կառավարում իրականացնելիս, կնքված պայմանագրին համապատասխան և ի շահ ընկերության, կատարելու ցանկացած իրավաբանական և (կամ) այլ գործողություններ,
- գույքի նկատմամբ իր իրավունքների պաշտպանության համար՝ պահանջելու վերացնել հիշյալ իրավունքների ամբողջ ծավալով իրականացմանը խոչընդոտող ամեն տեսակի խախտումները կամ սահմանափակումները,
- հավատարմագրային կառավարման աշխատանքների համար՝ ստանալու վարձատրություն՝ ամսական 1,650,000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Վճարումն իրականացվում է ընկերության միջոցների հաշվին՝ հավատարմագրային կառավարչի բանկային հաշվին համապատասխան գումարի փոխանցմամբ, պայմանագրում նշված վավերապայմաններով:

Հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը¹, որից հետո պետք է որոշում ընդունվի ընկերության հետագա կարգավիճակի մասին: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «Հայփոստ» ընկերությունը ընդգրկված է պետական գույքի մասնավորեցման ծրագրում, ներկայումս գործող՝ պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրում՝ համապատասխան լրացումը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2015 թվականի հունիսի 23-ին²:

ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 271-Ն որոշմամբ հավանություն է տրվել «Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացի շրջանակում անցկացված նախաորակավորման ընթացակարգի արդյունքներին, և հաստատվել է նախաորակավորված մասնակիցների ցանկը:

Որոշման մյուս հավելվածով հաստատվել է նշված ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգի մասնակցության «Հայտերի ներկայացման հրավերին», որը բաղկացած է «Հրահանգ մասնակիցներին» և գույքի «Վարձակալության պայմանագիր» մասերից:

Սահմանվել է նաև, որ գնման ընթացակարգի շրջանակում գույքի ապագա վարձակալի ընտրությունը կազմակերպվելու է հավանության արժանացած հրավերի «Հրահանգ մասնակիցներին» մասում սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն, որը ներկայումս ներառված է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կազմում, ճանաչվել է համակարգող մարմին, որը նախաորակավորման ընթացակարգի արդյունքում նախաորակավորված մասնակիցներին

¹ Տե՛ս «ՀՀ կառավարությունը 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» N 1240-Ս որոշումը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

² Տե՛ս «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-84-Ն օրենքը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից է 2015 թվականի հունիսի 23-ին, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

տրամադրում է անհրաժեշտ փաստաթղթերը և իրականացնում է գնման ընթացակարգը՝ ղեկավարվելով սահմանված կարգով¹:

«Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքների գույքը 15 տարի ժամկետով վարձակալության է հանձնվել մեկ միասնական վարձակալի: Վարձակալության պայմանագիր է կնքվել (այն գործում է 01.01.2017թ.-ից) միջազգային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Վեոլիա» ընկերության հետ («Վեոլիան» ֆրանսիական ընկերություն է, որը հիմնադրել է «Երևան ջուրը»):

Այսպիսով, պետություն-մասնավոր հատված համագործակցության ձևերի կիրառումը Հայաստանի Հանրապետությունում ունի սահմանափակ բնույթ, ինչը բացատրվում է այդ հատվածների միջև նոր զարգացող հարաբերությունների կայացմամբ: Եվ, եթե 1990-2000 թվականները հիմնականում բնութագրվում էին զանգվածային մասնավորեցման և օտարման գործարքներով, ինչի արդյունքում ստեղծվեց ՀՆԱ-ի ավելի քան 80%-ն արտադրող տնտեսության հատվածը: Ձևավորվելով և կայանալով որպես առանձին, ինքնուրույն հատված, մասնավոր սեփականության իրավունքի վրա կառուցված հատվածը դարձել է ՀՀ տնտեսության գերակշռող ու տանող ուժը, որը ենթադրում է պետական մարմինների և պետական մասնակցությամբ կազմակերպությունների հետ համագործակցության նոր ձևերի բացահայտում, ինչպես նաև գոյություն ունեցող ձևերի կատարելագործում ու դրանց արդյունավետության բարձրացում:

¹ Տե՛ս, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի «Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը վարձակալության հանձնելու գործընթացի շրջանակում անցկացված նախաորակավորման ընթացակարգի արդյունքներին և գնման ընթացակարգի մասնակցության հայտերի ներկայացման հրավերին հավանություն տալու, նախաորակավորված մասնակիցների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 271-Ն որոշումը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐՏԻՆԻ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր

Հայաստանի երրորդ Հանրապետության անցած տարիների տնտեսական բարեփոխումների հիմնական արդյունքներից է մասնավոր հատվածի կայացումը, որը ներկայումս ապահովում է թողարկվող ՀՆԱ-ի ավելի քան 80%-ը: Ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածների կայուն զարգացման գրավականը դրանց միջև արդյունավետ և շարունակական համագործակցության ձևերի կիրառումն է:

Հեղինակը քննարկել և բնութագրել է այդ ձևերը (հավատարմագրային կառավարում, կոնցեսիա, վարձակալություն և այլն), գալով այն եզրակացության, որ դրանք պետք է բազմազանեցնել և դարձնել ավելի արդյունավետ:

Բանալի բառեր. պետություն-մասնավոր հատված, հավատարմագրային կառավարում, կոնցեսիա, վարձակալություն, մասնավորեցում, օտարում, պետական գույքի օգտագործում

ФОРМЫ СОТРУДНИЧЕСТВА ГОСУДАРСТВЕННОГО И ЧАСТНОГО СЕКТОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ГРИГОР МАРТИНОВИЧ КУРГИНЯН

соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Одним из основных результатов экономических реформ третьей Республики Армения за прошедшие годы является становление частного сектора, который в настоящее время обеспечивает более 80% ВВП. Залогом стабильного развития как государственного, так и частного сектора служит применение эффективных и постоянных форм сотрудничества между ними. Автор рассмотрел и охарактеризовал эти формы (доверительное управление, концессия, аренда и т. д.), придя к выводу о том, что их нужно разнообразить и сделать более плодотворным.

Ключевые слова: государственный и частный сектор, доверительное управление, концессия, аренда, приватизация, отчуждение, использование государственного имущества.

TYPES OF PUBLIC-PRIVATE-PARTNERSHIP IN THE REPUBLIC OF ARMENIA

GRIGOR MARTIN KURGHINYAN

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

One of the main results of the economic reforms carried out of the third Republic of Armenia for the period of the last several years is the emergence of the private sector, which currently contributes to more than 80% of the GDP of the nation. The key to sustainable development of the both public and private sectors is the use of effective and permanent forms of cooperation between them. The author discussed and described these forms (trust and/or asset management, concession, renting, and etc.) and concluded that they need to be diversified and become more effective.

Keywords: State and private sector, trust and/or asset management, concession, renting, privatization, alienation, use of state property